

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

**ՆՎԵՐՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
Բաժին 1. Նվերների թույլատրելիության վերաբերյալ խորհրդատվական կարծիքի դիմելու ընթացակարգը.....	8
Բաժին 2. Խորհրդատվական կարծիքի տրամադրման ընթացակարգը.....	12
Բաժին 3. Նվերի արժեքի գնահատումը.....	14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրային ծառայության բարելավության համակարգը ներառում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները (**այդ թվում՝ պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունելու սահմանափակումների վերաբերյալ**), անհամատեղելիության պահանջները, այլ սահմանափակումներ և շահերի բախումը:

Ստացվում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման վրա ազդեցություն ունեցող նվերների ստացման սահմանափակման պահպանումը վերջիններիս պատշաճ գործելակերպի կամ վարքագծի անբաժանելի մաս է, ինչպես բարելավության մյուս տարրերի՝ անհամատեղելիության պահանջների, շահերի բախման կարգավորումների, այլ սահմանափակումների դեպքում: Սրա մասին է նաև փաստում ներպետական օրենսդրության շրջանակներում նվերների ընդունման կանոնակարգումների՝ վարքագծի կանոնների ներքո սահմանված լինելը:

Այս համատեքստում հարկ է նշել, որ նվերների ընդունմանն առնչվող վարքագծային կանոններ արդեն նախատեսված են Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոններով (այսուհետ՝ Տիպային կանոններ), հանրային ծառայողների՝ վարքագծի ոլորտային կանոնագրքերով, որոնք մշակվել են Տիպային կանոնների հիման վրա, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից սահմանված՝ Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքով:

Միաժամանակ, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերների ընդունման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայության մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին», «Պետական գույքի կառավարման մասին», «Պետական արարողակարգի մասին» օրենքներով և վերաբերելի այլ իրավական ակտերով:

««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 7-ի ՀՕ-540-Ն օրենքով վերանայվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերների ընդունման սահմանափակումները: «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չպետք է իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունեն կամ դրանք հետագայում ընդունելու համաձայնություն հայտնեն: Նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսվել է նաև, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պետք է միջոցներ ձեռնարկեն, որպեսզի իրենց ընտանիքի անդամները և իրենց հետ փոխկապակցված այլ անձինք չընդունեն նվեր կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն չհայտնեն, եթե առկա է հնարավոր կամ իրական կապ հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների կատարման և ստացված նվերի միջև:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում նախատեսվել են նվերների թույլատրելիության վերաբերյալ խորհրդատվական կարծիքի ստացման որոշակի դրույթներ: *Մասնավորապես, սահմանվել է, որ՝*

1. Եթե **հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողն** ստացել է նվեր, որը ողջամտորեն կարող է ընկալվել որպես իր պաշտոնեական

(ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված, ապա **հանրային ծառայողը** սահմանված կարգով անմիջապես, սակայն ոչ ուշ, քան **հնգօրյա ժամկետում**, **հայտնում է տվյալ մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպչին, դատավորը՝ Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովին, դատախազը, քննիչը՝ համապատասխան մարմնում գործող Էթիկայի հանձնաժողովին, այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝** տասնհինգօրյա ժամկետում իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով:

2. Եթե նվերը, բարեվարքության հարցերով կազմակերպչի, Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի, Էթիկայի հանձնաժողովի կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ստացված խորհրդատվական կարծիքի համաձայն, հանդիսանում է Օրենքի 29-րդ հոդվածի իմաստով թույլատրելի չհամարվող, ապա հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է ապահովել, որ ստացված նվերը վերադարձվի, կամ վճարվի դրան համարժեք հատուցում խորհրդատվական կարծիքն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում:
3. Եթե սահմանված ժամկետում նվերը վերադարձնելը կամ համարժեք հատուցում վճարելը հնարավոր չէ, ապա հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է սահմանված կարգով նվերը հանձնել պետությանը կամ համայնքին: Եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձին կամ հանրային ծառայողին հայտնի է դառնում, որ իր **ընտանիքի անդամները կամ իր հետ փոխկապակցված անձինք ստացել են նվեր**, որը ողջամտորեն կարող է ընկալվել որպես իր պաշտոնեական (ծառայողական)

պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված, ապա այդ մասին իրեն հայտնի դառնալուց հետո անմիջապես, սակայն ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում, հանրային ծառայողը սահմանված կարգով հայտնում է տվյալ մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպչին, դատավորը՝ Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովին, քննիչը, դատախազը՝ Էթիկայի հանձնաժողովին, այլ հանրայի պաշտոն զբաղեցնող անձը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ տասնհինգօրյա ժամկետում իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով:

4. Եթե նվերը, բարեվարքության հարցերով կազմակերպչի, Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի, Էթիկայի հանձնաժողովի կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ստացված խորհրդատվական կարծիքի համաձայն, հանդիսանում է Օրենքի 29-րդ հոդվածի իմաստով արգելված նվեր, ապա հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է միջոցներ ձեռնարկել, որ ստացված նվերը վերադարձվի, կամ վճարվի դրան համարժեք հատուցում խորհրդատվական կարծիքն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

Այսպիսով՝ նվերների ընդունման սահմանափակումների վերանայմամբ հստակեցվել են և՛ թույլատրելի, և՛ ոչ թույլատրելի նվերների ստացման հետ կապված գործողությունները:

Օրենքի իմաստով թույլատրելի համարվող նվերների համար Օրենքի 30-րդ հոդվածով սահմանվել է Նվերների հաշվառման ռեեստրում դրանց պարտադիր հաշվառման պահանջ: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման,

նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկերը սահմանվել են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ (այսուհետ՝ Հանձնաժողովի) 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 01-Ն որոշմամբ, որն ուժի մեջ է մտել 2024 թվականի հունվարի 1-ից:

Միաժամանակ, այն նվերների դեպքում, որոնք ներառված չեն Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված թույլատրելի նվերների շարքում և ողջամտորեն կարող են ընկալվել որպես պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված, դրանց թույլատրելիության վերաբերյալ անհրաժեշտ է ստանալ համապատասխան խորհրդատվություն:

Սույն մեթոդական ուղեցույցը (այսուհետ՝ Ուղեցույց) մշակվել է պարզեցնելու համար հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից ստացված նվերների թույլատրելիության վերաբերյալ խորհրդատվության տրամադրման գործընթացը՝ այդպիսով ապահովելով նվերների ընդունման կարգավորումների պատշաճ կիրարկումը:

Սույն Ուղեցույցը կարող է կիրառվել նաև բարեվարքության հարցերով կազմակերպիչների և օրենքով սահմանված էթիկայի հանձնաժողովների կողմից՝ Օրենքով սահմանված դեպքերում նվերների թույլատրելիության և իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ հանրային ծառայողներին և համապատասխան հանրային պաշտոն զբաղեցնող անձանց խորհրդատվություն տրամադրելիս:

Ուղեցույցը բաղկացած է երեք հիմնական բաժիններից: Առաջին բաժնում ներկայացվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից խորհրդատվական կարծիքի դիմելու գործընթացը: Երկրորդ բաժնով ներկայացվում է Հանձնաժողովի, օրենքով սահմանված էթիկային հանձնաժողովների և բարեվարքության հարցերով կազմակերպիչների կողմից խորհրդատվության տրամադրման գործընթացը: Միաժամանակ, նշված գործընթացները ներկայացված են առանձին հարցերի և դրանց պատասխանների ձևաչափով: Վերջին՝ երրորդ բաժնում ներկայացված է նվերների արժեքի գնահատման համար Հանձնաժողովին դիմելու ընթացակարգը:

Բաժին 1. Նվերների թույլատրելիության վերաբերյալ խորհրդատվական կարծիքի դիմելու ընթացակարգը

1. Ովքե՞ր և ու՞մ կարող են դիմել խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով:

Ստացված նվերի թույլատրելիության վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով՝

1.1 հանրային ծառայողը սահմանված կարգով և ժամկետում դիմում է տվյալ մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպչին,

1.2 դատավորը դիմում է էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովին, դատախազը, քննիչը՝ համապատասխան մարմնում գործող էթիկայի հանձնաժողովին,

1.3 այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք դիմում են Հանձնաժողովին:

1.4. Սույն կետի «1.1-1.3» ենթակետերը չեն սահմանափակում բարեվարքության հարցերով կազմակերպիչների և օրենքով սահմանված էթիկայի, էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովների կողմից, անհրաժեշտության դեպքում, սույն Ուղեցույցով սահմանված կարգով խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով Հանձնաժողովին դիմելու հնարավորությունը:

2. Նվերը ստանալուց հետո ի՞նչ ժամկետում պետք է դիմել համապատասխան խորհրդատվական կարծիքի ստացման համար:

1. Եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը ստացել է նվեր, որը ողջամտորեն կարող է ընկալվել որպես իր պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված, ապա վերջինս, անմիջապես, սակայն, ոչ ուշ, քան **հնգօրյա ժամկետում** հայտնում է սույն բաժնի 1-ին կետով նախատեսված համապատասխան պաշտոնատար անձին կամ մարմնին՝ տասնհինգօրյա ժամկետում իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով:

2. Եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձին կամ հանրային ծառայողին հայտնի է դառնում, որ իր ընտանիքի անդամները կամ իր հետ փոխկապակցված անձինք ստացել են նվեր, որը ողջամտորեն կարող է ընկալվել որպես իր պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված, ապա վերջինս, անմիջապես, սակայն, **ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում** հայտնում է սույն բաժնի 1-ին կետով նախատեսված համապատասխան պաշտոնատար անձին կամ մարմնին՝ տասնհինգօրյա ժամկետում իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով:

3. Ի՞նչ տեղեկավորություն պետք է ներկայացվի նվերի թույլատրելիության վերաբերյալ խորհրդավորություն ստանալու նպատակով:

Նվերի թույլատրելիության վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով սույն բաժնի 1-ին կետով նախատեսված համապատասխան պաշտոնատար անձին կամ մարմնին տեղեկատվություն ներկայացնելիս անհրաժեշտ է պահպանել հետևյալ ընդհանուր պահանջները.

- 1) տեղեկատվությունը պետք է ներկայացվի ճշգրիտ, հստակ, արժանահավատ, այն չպետք է լինի ապակողմնորոշիչ, անորոշ կամ ոչ լիարժեք (օրինակ՝ տրված նվերի էական հատկանիշները չպետք է որևէ կերպ քողարկված լինեն),
- 2) տեղեկատվությունը պետք է ներկայացվի էլեկտրոնային կամ թղթային տարբերակով,
- 3) տեղեկատվությունը պետք է պարունակի հետևյալ տվյալները.
 - ա. նվերը ստացողի անունը, ազգանունը, հայրանունը,
 - բ. նվերը ստացողի զբաղեցրած պաշտոնը,
 - գ. նվերը ստանալու օրը, ամիսը, տարեթիվը,
 - դ. նվերի տրամադրման վերաբերյալ հակիրճ տեղեկատվությունը (ի՞նչ պայմաններում և ու՞մ կողմից է տրվել նվերը),
 - ե. նվերի վերաբերյալ նկարագրական տվյալները (լուսանկար, բնութագրիչ այլ տվյալներ),
 - զ. նվերը տվողի հետ առկա կապի բնույթը:

Համապատասխան պաշտոն զբաղեցնող անձը կամ մարմինը կարող է պահանջել ներկայացնել լրացուցիչ տեղեկատվություն:

4. Իրավիճակի լուծմանն ուղղված ի՞նչ գործողություններ կարող են առաջարկվել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կամ հանրային ծառայողներին:

Հանձնաժողովը, օրենքով սահմանված էթիկայի հանձնաժողովը, բարեվարքության հարցերով կազմակերպիչը խորհրդարկական կարծիքի հիման վրա կարող են առաջարկել ձեռնարկել հետևյալ քայլերը՝

4.1 Եթե նվերը հանդիսանում է Օրենքի իմաստով թույլատրելի, սակայն դրա արժեքը գերազանցում է 60.000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, և այն Օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված նվեր է, ապա հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է սահմանված կարգով և ժամկետում նվերը հանձնել պետությանը կամ համայնքին:

Նվերի հանձնումն իրականացվում է Հանձնաժողովի՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 01-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ հետևյալ եղանակով՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը նվերը հանձնման-ընդունման ակտի հիման վրա հանձնում է համապատասխան մարմնի գլխավոր քարտուղարին (այլ հավասարազոր պաշտոն զբաղեցնող անձ), ով ապահովում է նվերի փոխանցումը Պետական գույքի կառավարման կոմիտե կամ տեղական ինքնակառավարման մասին օրենսդրությամբ նախատեսված մարմնին՝ օրենսդրությամբ սահմանված եղանակներով դրա հետագա տնօրինման հարցը լուծելու նպատակով:

4.2 Եթե նվերը հանդիսանում է Օրենքի իմաստով թույլատրելի չհամարվող, ապա հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է ապահովել, որ ստացված նվերը՝

- վերադարձվի, կամ վճարվի դրան համարժեք հատուցում խորհրդատվական կարծիքն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում,
- եթե սահմանված ժամկետում նվերը վերադարձնելը կամ համարժեք հատուցում վճարելը հնարավոր չէ, ապա հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է սահմանված կարգով նվերը հանձնել պետությանը կամ համայնքին:

4.3 Եթե նվերը հանդիսանում է Օրենքի իմաստով թույլատրելի և դրա արժեքը չի գերազանցում 40 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, հանրային

պաշտոն զբաղեցնող անձը պարտավորություն չի կրում այն հաշվառելու (բացառությամբ նույն աղբյուրից վեց ամսվա ընթացքում նվերի ստացման պարբերական (հինգ և ավելի) բնույթ կրող դեպքերի) կամ հանձնելու պետությանը կամ համայնքին:

4.4 Եթե նվերը հանդիսանում է Օրենքի իմաստով թույլատրելի, սակայն դրա արժեքը գերազանցում է 40 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավորություն է կրում այն հաշվառելու Նվերների հաշվառման ռեեստրում:

4.5. Նախքան Ռեեստրի գործարկումը, հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ Պետական արարողակարգի ծառայությունը պարտավոր են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից ստացված թույլատրելի համարվող՝ 40 000 ՀՀ դրամը գերազանցող նվերները հաշվառել Հանձնաժողովի կողմից հաստատված էլեկտրոնային ձևաթղթի միջոցով: Ձևաթուղթը, դրա լրացման և ներկայացման տեսաձայնային և տեքստային ուղեցույցերը հասանելի են Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ հետևյալ հղումով՝ <https://shorturl.at/fgmBR>:

Բաժին 2. Խորհրդատվական կարծիքի տրամադրման ընթացակարգը

1. Ի՞նչ ժամկետում է հանրային պաշտոն զբաղեցնող անձին և հանրային ծառայողին տրամադրում խորհրդատվական կարծիքը:

1.1 Էլեկտրոնային տարբերակով նվերի ստացման հանգամանքների վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուց հետո բարեվարքության հարցերով կազմակերպիչը,

օրենքով սահմանված էթիկայի հանձնաժողովը կամ Հանձնաժողովը **տասնհինգօրյա** ժամկետում քննում է ստացված տեղեկատվությունը և հանրային պաշտոն զբաղեցնող անձին կամ հանրային ծառայողին ներկայացնում խորհրդատվական կարծիք՝ իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ:

1.2 Եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձին կամ հանրային ծառայողին տրված նվերը կենդանի կամ Կառավարության որոշմամբ սահմանված ցանկի համաձայն՝ շուտ փչացող կամ պահպանման էական ծախսեր պահանջող գույք է, ապա խորհրդատվական կարծիքը տրամադրվում է անհրաժեշտ տեղեկատվությունն ստանալուց հետո ողջամիտ ժամկետում՝ հիմք ընդունելով այդ մասին դիմումում առկա նշումը:

2. Ինչպե՞ս է գնահատվում նվերի թույլատրելի կամ ոչ թույլատրելի լինելը և դրա հերևանքները:

1. Համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կամ մարմնի խորհրդատվական կարծիքի համաձայն՝ նվերը կարող է համարվել Օրենքի իմաստով թույլատրելի կամ ոչ թույլատրելի (արգելված): Համապատասխան պաշտոն զբաղեցնող անձը կամ մարմինը խորհրդատվական կարծիքը տրամադրելիս պետք է ապահովի հետևյալ պահանջների պահպանումը՝

- 1) նվերի թույլատրելիությունը որոշելիս հիմք է ընդունում նվերների ընդունմանը վերաբերելի օրենսդրական սահմանափակումները, նվերի ստացման հանգամանքները, նվերի հնարավոր կապը հանրային պաշտոն զբաղեցնող անձի պաշտոնեական (ծառայողական) պարտավորությունների իրականացման հետ, նվեր տվողի և հանրային պաշտոն զբաղեցնող անձի միջև առկա կապը/փոխկապակցվածությունը, կապի բնույթը և ներկայացված այլ տեղեկությունները:

- 2) խորհրդատվություն տրամադրելիս ապահովվում է նույնական կամ համանման հանգամանքներում ստացված նվերների թույլատրելիության վերաբերյալ ներկայացվող դիրքորոշումների միասնականությունը:
 - 3) ներկայացրած խորհրդատվական կարծիքը պետք է լինի ճշգրիտ, հստակ, այն չպետք է լինի ապակողմնորոշիչ, անորոշ կամ ոչ լիարժեք:
2. Նվերների ընդունման սահմանափակումների կամ հաշվառման սահմանված կարգի խախտումն օրենքով նախատեսված դեպքերում առաջացնում է վարչական պատասխանատվության:

Բաժին 3. Նվերի արժեքի գնահատումը

1. Ո՞ր դեպքերում է Հանձնաժողովն իրականացնում նվերի արժեքի գնահատում:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերի արժեքը գնահատվում է Օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև Հանձնաժողովի՝ 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 01-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն:

Մասնավորապես, նվերների արժեքը գնահատվում է նվերը ստացող անձի կողմից՝ օգտվելով ինտերնետային տիրույթում առկա բաց աղբյուրներում հասանելի տվյալներից, կամ նույն կամ նույնանման ապրանքների կամ ծառայությունների գների վերաբերյալ հանրամատչելի տեղեկություններից:

- Բաց աղբյուրներից օգտվելու պարագայում անհրաժեշտ է գնի որոշման համար համադրել առնվազն երկու նմանատիպ աղբյուր, կամ օգտագործել ապրանքի կամ ծառայության համար արժեք սահմանող առաջնային աղբյուրը (օրինակ՝ արտադրող կամ թողարկող կազմակերպության կամ պաշտոնական վաճառք իրականացնող կայքէջ):

- Նույն կամ նույնանման ապրանքների կամ ծառայությունների գների վերաբերյալ հանրամատչելի տեղեկություններից օգտվելու պարագայում թույլատրվում է օգտվել մեկ աղբյուրից, եթե ապրանքը կամ ծառայությունը ամբողջովին նույնական են (օրինակ՝ խանութում առկա է նույն ապրանքից):
- Գների որոշման նպատակով թույլատրվում է օգտվել էլեկտրոնային և առկա առևտրային բոլոր հարթակներից (օրինակ՝ amazon, e-bay, taobao, ozon, wildberries, Հայաստանի Հանրապետության կամ արտերկրում գործող առևտրի կամ ծառայությունների մատուցման այլ հարթակներ):

Նվերի արժեքի որոշումը բարեվարքության հարցերով կազմակերպիչների, օրենքով սահմանված էթիկայի հանձնաժողովների և Հանձնաժողովի կողմից ևս իրականացվում են վերը նշված եղանակով:

Այն դեպքերում, երբ անձի կողմից նվերի արժեքի որոշումը հնարավոր չէ կամ անձը դժվարանում է որոշել նվերի արժեքը, այդ մասին գրավոր տեղեկացնում է Հանձնաժողովին՝ համապատասխան աջակցություն ստանալու նպատակով:

Այն դեպքերում, երբ բաց աղբյուրներով և հանրամատչելի տեղեկատվությամբ հնարավոր չէ որոշել ապրանքի արժեքը, Հանձնաժողովը կարող է Պետական եկամուտների կոմիտեի հետ համագործակցության միջոցով օգտագործել Պետական եկամուտների կոմիտեի կողմից կիրառվող ապրանքի գնի որոշման մեթոդը:

Նվերների արժեքը գնահատելու համար, անհրաժեշտության դեպքում, Հանձնաժողովը կարող է դիմել և ստանալ անկախ փորձագիտական եզրակացություն:

Նվերի գնորոշման համար փորձաքննության անցկացման անհրաժեշտության դեպքում Հանձնաժողովն այդ մասին տեղեկացնում է հանրային պաշտոն զբաղեցնող անձին: Փորձաքննության կազմակերպման հետ կապված հարաբերությունները ենթակա են կարգավորման համապատասխան իրավական ակտով: